


# Եղեգնուհի



Exported from Wikisource on 07/29/20

# Եղեգնուհի

## Դազարսու Աղայան

[34]

1

Մի քազավոր է Էլել: Այս քազավորը մի որդի է ունեցել մինուճար: Տղան որ հասել է, հայրն ասել է.

— Որդի՛, ժամանակ է քեզ ամուսնանալու . ո՞ւմ ես աշքադրել, ասա՛, զնանք նրան ուզենք, կամ թե չե մեզ կամք տուր, մենք ինքներս կընտրենք քեզ հարմար մի աղջիկ:

Որդին ասաց.

— Հա՛յր, ես միտք չունիմ աղջիկ ուզելու, իսկ եթե ուզելու լինիմ՝ պետք է այնպեսն ուզեմ, որ հոր ու մոր ծնունդ չլինի:

Զարմանում է հայրը և ասում է.

— Այդպես բան անկարելի է:

[35] Որդին ասում է.

— Անկարելի բան չկա, հա՛յր. Աստուծոն ձեռին ամեն ինչ հեշտ է, նա կարող է քարերից էլ մարդիկ շինել:

Քանի անզամ որ հայրն առաջարկում է որդուն ամուսնանալ, որդին միշտ այս է ասում, թե՛ հոր ու մոր ծնունդ ուզելու չե:

Շատ որ ասում է որդին, և ասում է հավատալով և ոչ թե գիտությամբ՝ բանք դժվարացնելու համար, քազավորն էլ է հավատում, որ կարելի բան է այդ, սկսում է փնտրել որդու ուզածի նման մի աղջիկ: Շատ է հարց ու փորձ անում, շատերն ասում են, որ լսել են, թե եղած է այդպես բան, բայց իրանց աշքովը տեսած չեն և չզիտեն, թե որտե՛ղ կարող են մարդիկ ծառի պես բանել և չունենալ ո՛չ հայր և ո՛չ մայր:

Թագավորն իր որդու սիրույն համար ընկավ աշխարհեաշխարհը և չոլեչոլ, շատ տեղ ման եկավ, շատ տեղ հարց ու փորձ արավ, ոչինչ զգտավ: Վերադարձին մի անտառի մեջ պատահեց նրան մի ծերունի. նրան Էլ հայտնեց թագավորը, թե ինչի՞ է ման գալիս: Ծերունին ասաց.

— Դրա համար հարկավոր չէ հեռու երթալ. քո քաղաքի մոտ մի մեծ գետ կա, նրա ավիին մի եղեգնուտ կա, ուր մարդի ոտք ընկած չէ դեռևս, որովհետև այն տեղը սուրբ և անմատչելի է համարվում, իսկ շատերն Էլ կարծում են, որ այնտեղ աներևույթ ոգիք կան: Կերթաս այստեղ, կընտրես եղեգներից ամենից գեղեցիկը, կկտրես չքանեցրած դանակով, կձգես ջուրը, և նա իսկույն կդառնա աղջիկ՝ քո որդու հավանած:

Թագավորն ինչպես որ լսեց, այնպես Էլ արավ: Եղեգը աղջիկ դառավ և մնաց ջրի մեջ ընկղմած, դուրս գալ ամաչեց, որովհետև մերկ էր: Թագավորն ասաց.

— Սպասի՛ր այստեղ, ես քեզ համար հազուստ և աղախիններ կուղարկեմ, դու իմ հարսնացուն ես. քեզ պիտի ուզեմ իմ որդուս համար:— Այդ ասաց թագավորը և նրա անունն Էլ դրավ Եղեգնուիի, որ կնշանակե եղեգն աղջիկ:

2

Գետի մոտերքում բնակվում էին թափառական սևադեմ բոշաներ: Թագավորը որ հեռացավ՝ մի բոշա աղջիկ գնաց նույն տեղը, ուր որ թագավորն էր, և տեսավ այստեղ մի հրաշալի գեղեցկության աղջիկ: Հարցրեց նրա ով լինելը, աղջիկն Էլ ասաց, որ թագավորի հարսնացուն է, հիմա պիտի գան տանեն իրան:

Բոշան տեսավ, որ Եղեգնուիին շատ միամիտ է, ուզեց ինքը բռնել նրա տեղը:

— Դո՞ւրս եկ,— ասաց,— ջրիցը, ինձնից մի՛ քաշվիր:

Աղջիկը դուրս եկավ ափը թե չէ՝ բոշան նրան խեղդեց ու զցեց գետը, իսկ ինքը մերկացավ և ընկղմվեց ջրի մեջ, որ կարծեն, թե նա՛ է Եղեգնուիին:

Թագավորի նաժիշտները եկան փառակոր հազուստով և տեսան՝ ի՛նչ... մի սև, այլանդակ բոշա աղջիկ:

— Դո՞ւ ես,— ասացին,— Եղեգնուիին:

— Այո՛,— պատասխանեց աղջիկը:

— Հապա ինչո՞ւ ես սև ու տգեղ, նա շատ չքնաղ և աննման պետք է լինի:

— Գիտե՞ք, — ասաց բոշան, — դուք շատ ուշացաք, արևն այրեց ինձ և փոխեց կերպարանքս: Բայց այս վնաս չունի, եթե ինձ պահեն շուշաբանդ պալատում, մի <sup>36</sup> օրից կրկին կստանամ իմ առաջվան գեղեցկությունը:

Հավատացին նաժիշտները, թագուհու հազուստ հազգրին և տարան ապարանք: Թագավորը որ տեսավ՝ մնաց զարմացած:

— Սա իմ տեսած աղջիկը չէ, — ասաց:

Թագավորի որդին էլ որ տեսավ՝ ետ քաշվեց զզվանքով:

— Սա չէ, — ասաց, — իմ ուզածը: Նա սպիտակ պետք է լինի, ինչպես հրեշտակ, իսկ սա սև է, ինչպես սատանա:

Խոսեցրին աղջկանը . նա միևնույն ասաց, ինչ որ նաժիշտներին:

— Լա՛վ, — ասացին և տարան դրին մի շուշաբանդ սենյակում, որ այնտեղ գեղեցկանա, և սկսեցին մեծ պատվով պահել: Միայն տղան մոտ չէր գնում . նա զգում էր, որ քանի մեջ չարի մատը կա խառնված, որ այստեղ մի խարդախություն կա, բայց ինչպես իմանա եղելության որպիսությունը:

### 3

Շատ տիսուր է թագավորի որդին: Օրեք են անցնում, բայց նորահարսի գեղեցկանալու մասին լուր չկա . ինչքան լավ են պահում, այնքան ավելի է պլայում նա, ինչպես սև սաք, և գիրանում ու հաստանում է խոզի պես:

Թագավորի որդին իր մտատանջությունն ու սրտնեղությունը փարատելու համար զնաց դեպի գետի ափին զբոսնելու: Այնտեղ նա ձկնորսներ տեսավ, որոնք ուղղանք ձուկն էին որսում: Կանչեց նրանց իր մոտ և ասաց.

— Ուղկաններդ ձգեցե՛ք ահա այսինչ տեղը, ուզում եմ քախտս փորձել, ինչ որ դուրս գա՝ իմս է: Ուղկանը ձգեցին, և դուրս եկավ մի հրաշալի ձուկն՝ ինքն արծաթի, իսկ թևերը ոսկի: Զարմացան որսորդները, այնպիսի ձուկն նրանք ո՛չ լսած և ո՛չ տեսած էին:

— Քե՛զ է միայն արժանի այս ձուկը, — ասացին նրանք թագավորի որդուն, — <sup>37</sup> և առանց թեզ էլ բռնած լինեինք, պիտի թերեինք թեզ ընծած:

— Շնորհակա՛լ եմ, — ասաց թագավորի որդին և նրանց լավ վարձատրեց: Ձուկը տարավ և ձգեց իր ծաղկանցի ավազանը, և այնուհետև էլ նրա մոտից չէր հեռանում, նրան նայելուց չէր կշտանում, նրա մոտ էր ուտում, խմում և ննջում:

Բոշա աղջիկն իմացավ, որ մի հրաշալի ձուկ է բռնել թագավորի որդին, և խկոյն հասկացավ, որ նա ի՞նքն է Եղեգնուիին, որ սպանվելուց հետո ձկան կերպարանք է ստացել, Էլ քունը չտարավ: Եվ մեկ օր ասաց նաժիշտներին.

— Ի՞նչ կարող եմ գեղեցկանալ, քանի որ թագավորի որդին խորշում է ինձանից և իր սերը մի ձկան է տվել: Եթե այդ գեղեցիկ ձուկը մորթեն և ուտեցնեն ինձ՝ իմ գեղեցկությունը կրկին վրաս կգա:

Այս բանը շատ որ ասաց և հավատացրեց ամենքին՝ ճարահատյալ ձուկը մորթեցին և <sup>38</sup> մուտեցրին բոշային, բայց նա Էլի մնաց բոշա ու բոշա:

4

Ձուկը որ կերավ աղջիկը՝ փշերը տվավ նաժիշտներին և հրամայեց, որ ուտեն: Նաժիշտները, գեղեցկանալու հույսով, կերան ձկան փշերը, բայց մեկ փուշ ազատվեց նրանց քերանից և, աղբի հետ պարտեզ ընկնելով, մի ծառ դառավ, մի զարմանալի և հրաշալի ծառ, մշտադալար և մշտաբեր: Նրա ծաղիկների հոտից մարդ չէր կշտանում, իսկ պտուղն էր փունչ մարզարիտ: Թագավորի որդին հիմա Էլ այդ ծառի վրա սիրահարվեց, նրա հովանու տակ հաստատեց իր բնակությունը և գիշեր-ցերեկ այստեղից չէր հեռանում:

Բոշան գլխի ընկավ, որ այդ ծառը ձկան մնացորդից է առաջ եկել, շատ տիրեց և, ամենայն հնարք գործ դնելով՝ խարեց թագավորին, թե մինչև ծառը չկտրե, որդին իրան չի սիրիլ, և քանի որ նա չի սիրիլ, ինքը միշտ տգեղ կմնա:

Հավատաց թագավորը և կտրել տվավ ծառը: Բոշան այրեց ծառի բոլոր մասերը և ինքն իր մեջ հանգստացավ:

Բայց ծառը կտրելիս մի կոկ տաշեղ թռավ և մի խեղճ պառավի տան հերթովն <sup>[1]</sup> ընկավ ներս: Այս բանը չնկատեց բոշան, չնայած որ ամեն զգուշություն գործ էր դրել, որ մի շյուղ անգամ չազատվի ձեռքիցը:

Պառավը երբ տեսավ տաշեղը, շատ հավանեց. այս ի՞նչ լավ խուփ է, ասաց, և վեր առավ, նրանով ծածկեց մի բղուղի <sup>[2]</sup> քերան:

Պառավը շատ աղքատ էր և իր ձեռքի աշխատանքովն էր ապրում: Առավոտը կանուխ դուրս էր գալիս տանից, գնում էր սրա-նրա մոտ ջահրա <sup>[3]</sup> մանում, գործ անում, երեկոյին գալիս էր տուն: Այսպես մյուս առավոտը հենց որ գնաց իր բանին, բղուղի խուփը տեղիցը թռավ և դառավ մի սիրուն աղջիկ, այսինքն՝ Էլի դառավ առաջվան Եղեգնուիին, միայն թե՝ այս անգամ պարզ և սիրուն հազուստով զարդարված:

Եղեգնուիին վեր առավ ավելը, տունը-տեղը մաքոր սրբեց, կրակ արավ, կերակոր եփեց և իրիկնադեմին, պառավի զալու ժամանակը, թար կացավ մի անկյունում: Պառավը ներս մտավ և, տեսնելով ամեն ինչ սարքած, կարգած, տունն ավլած, կերակորը եփած՝ մնաց զարմացած:

— Ո՞վ պիտի լինի արած այս բանը,— ասաց .— դուռը կողպած էր, ոչ ոք չէր կարող ներս գալ . կարելի է՝ հերթովը լինի մտած: Բայց ով ոք է՝ ինձ լավություն է արել, վատություն չի արել, երանի միշտ այսպես անե:

Եղեգնուիին լսեց պառավի խոսքերը, տեսավ, որ գոհ է, սկսեց հազար և կամաց կամաց դուրս եկավ մութ անկյունից: Պառավը որ տեսավ Եղեգնուիուն՝ մնաց հիացած: Աղջիկը փաթաթվեց պառավին, համբուրեց նրա կուրծքից և ասաց.

— Դու ինձ մայր, ես քեզ աղջիկ...

— Շատ ուրախ կլինիմ,— ասաց պառավը,— բայց դու այնքան գեղեցիկ ես, ոք կարծես հողեղեն չլինիս, երեսիցդ լույս է թափվում . բանի ոք դու կլինիս, Էլ մեր տանը հարկավոր չի լինիլ ո՛չ ճրագ և ո՛չ կրակ:

Այս ասաց պառավը և սկսեց համբուրել աղջկանը, ինչպես մի սրբուհու, և հարցրեց, թե՝ ո՞վ է նա:

— Իմ ով լինելը մի՛ հարցնիր . Ժամանակ կզա՞ կիմանաս, իսկ մինչև այն ժամանակը ոչ ոքի մի էլ ասիլ, որ ինձ նման մի աղջիկ ունիս . իմ երեսը ոչով չպիտի տեսնի, բացի քեզանից: Դու կշարունակես քո պարապմունքը, ես տանը կմնամ, ինձ <sup>39</sup> հետար կար ու գործ կբերես, ես կանեմ:

5

Եղեգնուիու հրաշալի կար ու գործի համբավը հասավ մինչև թագավորի ապարանքը: Թագավորի որդին կանչեց պառավին և զանազան կար ու գործի պատվերներ տվավ նրան: Պառավը շուտով հասցրեց այդ ամենը, տղան նայեց, մնաց զարմացած, կարծես ձեռք ու ասեղ չէր դիպած:

— Այ պառավ,— ասաց թագավորի որդին,— ո՞վ է կարել այս, պեսք է ինձ ուղիղն ասես:

Պառավը շկարողացավ թաքցնել և ասաց, թե՝ այսպես ու այսպես մի աղջիկ ունիմ, նա՛ է անում այս ամենը: Թագավորի որդին ասաց.

— Ես պիտի տեսնեմ նրան:

Պառավն ասաց.

— Շատ լավ, բայց թույլ տուր՝ առաջ իրանից իրաման առնեմ, թող իր կամքովը լինի:

Տղան ասաց.

— Շատ լավ, բայց շուշացնես:

Պառավն ասաց աղջկանը, որ թագավորի որդին ուզում է նրա տեսությունը: Աղջիկն ասաց.

— Շատ լավ. կասես իրան, որ մենակ չգա, այլ թող հետք քերե իր հորն ու մորը և իր նորահարսին: Դու ճաշի իրավիրիր նրանց, մի՛ վախենար. Ես ամեն պատրաստություն կտեսնեմ, նրանց քաղցած չենք քողնիլ:

Պառավը հայտնեց թագավորի որդուն, և նա Էլ, ինչպես ասել էր աղջիկը, վեր առավ հորն ու մորը և հարսնացվին ու գնաց պառավին հյուր:

Եղեգնուիին դռան մոտ դիմավորեց նրանց և թագավորավայել ձևերով ու պատվով ներս իրավիրեց հյուրերին: Ամենքը մնացին հիացած: Ի՞նչ գեղեցկություն, ի՞նչ շարժմոնք, ի՞նչ խոսք ու զրոյց: Եղեգնուին հասակը իսկ և իսկ եղեգնի նման ծկուն ու ծճուն, երբ խոսում էր՝ կարծես քերանից մարզարիտ էր թափում, երբ ժպտում էր՝ երեսին վարդ-մանիշակ էր փոփում: Թագավորն իսկոյն ճանաչեց, որ իր տեսած աղջիկը սա՛ էր, բայց ձայն չհանեց. թագավորի որդին Էլ թեպետ չէր տեսել, բայց սրտով իմացավ, որ սա՛ պիտի լինի իր հարսնացուն. իսկ բոշա աղջիկը ամենից շուտ ճանաչեց և ավելի ևս ևսացավ: Տուն մտան թե չէ՛ սկսեց սրտնեղիլ.

— Ա՛խ, այս ո՞ւր քերիք ինձ,— ասաց,— մի՞թե մեզ կվայելե այսպիսի մի խրճիթ մտնել ու այս սատանայի երեսը տեսնել:

Բայց նրա խոսքերին ոչ ոք ուշադրություն չդարձրեց, ամենքի ուշը ու միտքը զրավել էր Եղեգնուիին: Պառավի ուրախությանն էլ չափ չկար, տեսնելով իր աղջկա արած ազդեցությունը, տեսնելով, որ թագավորն ու թագուիին պատրաստ են իրանք ծառայելու նրան, բոլորովին ջահելացել էր և թև էր առել, թռչում, մերթ թագավորի ականջին էր քչփշում մի բան, մերթ՝ թագուին: Պառավն այն էր ասում, որ իր աղջիկը հողեղեն չէ, այլ՝ երկնքից իշած մի չնաշխարհիկ էակ է, որ նրա ձեռքին ամեն ինչ հնարավոր է, և այլ այսպիսի գովություն ու փառաբանություն: Վերջը թագավորն ասաց.

— Սիրո՛ւն աղջիկ, մենք քեզ հետ խոսելուց չենք կշտանալ, քեզ հետ ապրողի համար տարին մի ժամվան պես կանցնի, լավ կլինի, ուրեմն, որ շուտ ասես մեզ, թե՛

ո՞վ ես, ի՞նչ տեղից ես ընկել այստեղ, ովքե՞ր են քո հայրն ու մայրը և որտե՞ղ են  
կտանիմ:

Աղջկն ասաց.

— Ողջ լինի թագավորը, ես իմ մասին ոչինչ չեմ կարող ասել, բայց եթե քոյլ  
կտաք ձեր աղախնին, և ձանձրություն չի լինիլ ձեր մեծությանը՝ ես մի համառոտ  
հերիաք կասեմ:

— Շատ ուրախ կլինինք,— ասաց թագավորը,— ինչ որ ասես, մենք  
ուրախությամբ կլսենք:

Եղեգնուիին մեջտեղ քերավ մի վազան<sup>[4]</sup> չոր ճյուղ և տնկեց սուփրի մեջտեղը,  
մի մորթած ու մաքրած հում կաքավ էլ շամփուրը քաշած՝ քերավ, դրավ սուփրի  
վրա և ասաց.

— Այն, ինչ որ ես ասելու եմ, եթե ստույգ լինի, քող այս կաքավը անկրակ  
խորովվի, և այս վազան չոր ճյուղը դալարի:

Ամենքն էլ աչք ու ականջ դառան, որ տեսնեն՝ աղջկն ի՞նչ պիտի պատմե:  
Աղջկն սկսեց.

«Մի թագավոր մի որդի ուներ մինուճար: Երբ որ որդին հասավ, և թագավորն  
ուզեց նրան ամուսնացնել՝ նա ասաց.

— Հա՛յր, ես կամուսնանամ, բայց իմ ամուսինս պետք է հոր ու մոր ծնունդ  
շլինի»:

Այս ասաց աղջկը և, դառնալով կաքավին, հարցրեց.

— Այդպես չէ՞ կաքա՞վ:

Կաքավը պատասխանեց.

— Այդպե՞ս, տիրուիի:

Հետո աղջկը դարձավ վազանը և ասաց.

— Վա՛զն, ուրախացիր, խաղող վեր կալ:

Վազը դալարեց և սկսեց ծաղկել: Կաքավն էլ սկսեց քշքշալ ու խորովվել,  
ինչպես կրակի վրա: Աղջկը շարունակեց.

«Ճար չկար, թագավորը շատ ման եկավ, որ իր որդու ուզած մի աղջիկ գտնե, վկաչը <sup>41</sup> մի ծերունու խորհրդով նա մի եղեգն կտրեց, ձգեց գետը . Եղեգն իսկույն աղջիկ դառավ և ընկղմվեց գետի մեջ»:

— Այդպես չե՞ն, կաքա՞վ:

— Այդպե՞ս, տիրուիի:

— Վա՞զն, ուրախացիր, խաղող վեր կալ:

Կաքավն սկսեց խորովվել, իսկ վազը խաղող վեր կալավ: Բոշա աղջիկը գլխի ընկավ, որ հիմա իր չարագործությունը պիտի պատմե, սկսեց սրտնեղիլ, տրտնջալ, թե՛ շոգ է, չի կարող նստել, տուն է ուզում զնալ:

— Շատ ես շտապում,— ասաց թագավորը,— հիմա կտանենք քեզ ուր որ հարկավոր է:

Աղջիկը շարունակեց.

«Աղջիկը մերկ էր, չեր կարող ջրիցը դուրս գալ: Թագավորն ասաց.

— Այստեղ սպասի՛ր, ես քեզ համար հազուստ կուղարկեմ, կհազնես ու կգաս:

Թագավորը զնաց թե չե, որտեղից որ էր՝ մի աղջիկ դուրս եկավ, դեմքն այլանդակ ու սև, արա՞բ էր արդյոք, թե՞ խափշիկ <sup>[5]</sup>, բոշա՞ էր, թե՞ դարաշի <sup>[6]</sup>, խաբեց աղջկանը, դուրս քաշեց ջրիցը, խեղդեց, զցեց ջուրը և ինքն ընկղմվեց նրա տեղը: Եկան նաժիշտները և նրան տարան թագավորին հարսնացու»:

— Այդպես չե՞ն, կաքավ:

— Այդպե՞ս, տիրուիի:

— Վա՞զն, ուրախացիր, խաղող վեր կալ:

Բոշա աղջիկը տեղից վեր կացավ, Էլ չկարաց դիմանալ:

— Դա սատանա է,— ասաց,— և ինչ որ ասում է՛ բոլորն Էլ սուտ է. դա ուզում է հիմա իմ տեղը քոնել և հնարում է այդ քանը, դա կախարդ է:

— Լա՛վ,— ասաց թագավորը,— դու կարող ես զնալ տուն: Նաժիշտնե՛ր, սրան տարեք տուն և լավ պահպանեցեք մինչև մեր զալը:

Եղեգնուիհին պատմեց բոլորը, մինչև կաքավը խորովվեց, ու խաղողն էլ հասավ: Խորովածը կերան և վրան էլ՝ խաղողը: Եղեգնուիհուն տարան պալատը, յոթն օր, յոթը գիշեր հարսանիք արին, իսկ բոշային կապեցին մի ձիու պոչից և, քարեքար տալով, սատկեցրին: Չարն այնտեղ, քարին այստեղ:

## Տողատակեր

1. **↑ Ճերք - երդիկ**
2. **↑ Բղուղ - պանրի, թթվի, յուղի երկար կծուճ**
3. **↑ Զահրա - ճախարակ**
4. **↑ Վազան ճյուղ - խաղողի վազի ճյուղ**
5. **↑ Խափշիկ - 1. հարեշ, եթովպացի.**  
2. նեղը, սևամոռը
6. **↑ Ղարաշի - զնչու, նաև՝ լաշառ**

# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](#)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](#)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](#)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- Վազգեն
- Voskanyan
- 5.77.140.28
- GeoO
- Uuhuul

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)